

ԱՌԱՆՑ ՎԵՐՆԱԳՐԻ

Ա. Չեխովի.

Ինչպէս որ այժմ արեգակը ծագում և մայր է մտնում, այնպէս էլ հինգերորդ դարումն էր: Այն ժամանակ էլ, ինչպէս այժմ, արևը ծագելիս, վաղորդեան ճառագայթները համբուրում էին ցողերի հետ, երկիրը կենդանանում և օդը լցւում էր յուսոյ և խնդութեան աղաղակներով, իսկ երեկոյեան, այդ միևնոյն երկիրը ննջում էր դաժան մթութեան մէջ: Այն ժամանակ էլ օրերը նման էին օրերին, իսկ գիշերները գիշերներին. երբեմն երբեմն, լողալով անցնում էին ամպերը ու խուլ կերպով որոտում կայծակը. կամ յորանջելով այս ու այն կողմից ընկնում էր մի աստղ. Նրբեմն էլ, վանքի միաբաններից մէկը, ընկերների մօտ վազելով, պատմում էր թէ ինչպէս ինքը վազրի էր հանդիպել: Ուրիշ ոչ մի բան չէր պատահում: Այսպէս, օրերը նման էին օրերին, գիշերները գիշերներին:

Միաբանները աշխատում ու աղօթում էին Աստծուն, իսկ նրանց ծերունի վանահայրը երգեհոնի վրայ նուագելով, միևնոյն ժամանակ լատիներէն երգեր և եղանակներ էր շարադրում:

Այդ հրաշալի ծերունին, օժտուած էր զարմանալի ընդունակութեամբ: Նա այնպիսի հմտութեամբ էր նուագում երգեհոնի վերայ, որ լսողութիւնները բթացած ամենածեր միաբաններն անգամ, անկարող էին զսպել իրանց արտասուքները, երբ նա նուագում էր այդ գործիքի վերայ:

Նրբ նա խօսում էր,— թէկուզ ամենաչնչին բաների վերայ — ինչպէս օրինակ ծառերի, գաղանների կամ ծովի մասին, անկարելի էր լսել նրան, առանց ծիծաղի կամ արտասուքի և կարծես թէ նրա հոգումն էլ երգեհոնի լարերն էին հնչում: Նրբ նա բարկանում կամ սաստիկ ուրախանում էր, կամ թէ չէ սարսափելի և ահարկու բաների վրայ էր խօսում, ոգևորութիւնը պատում էր նրան և փայլատակուող աչքերից ար-

տասուքներ էին ցայտում: Երեսը կարմրում էր, ձայնը որոտում էր ինչպէս կայծակը և ունկնդիր միաբանները զգում էին, որ Քրանց հոգիներն էլ կապուած են նրա ոգևորութեամբ: Այդ հրաշալի բոլակներում, նրա իշխանութիւնը անսահման էր և եթէ նա իւր այդ ծերունիներին հրամայելու լինէր լցուել ծովը, նրանք առանց վարանման, անյապաղ կկատարէին նրա հրամանը: Նրա ձայնը, նրա նուազն ու բանաստեղծութիւնները, որոնց մէջ նա փառաբանում էր Աստծուն, երկիրքը ու երկիրը, ցնծութեան մշտական աղբիւր էին ներկայացնում միաբաններէ համար:

Պատահում էր, որ միապաղաղ կեանքի պատճառով, նրանց ձանձրացնում էին թէ գարունը, թէ աշունը, թէ ծառերը և թէ ծաղիկները, իսկ ծովի աղաղակից յոգնում էին նրանց լսելիքները: Մինչև անգամ թուշունների երգերն ու դայլայիկները ձանձրացնում էին նրանց: Բայց վանահօր տաղանդը, հացի պէս, պէտք էր ամեն օր:

Անցնում էին տասնեակ տարիներ, օրերը դարձեալ նման էին օրերին, իսկ գիշերները գիշերներին: Վանքի շուրջը, բացի վայրենի թուշուններից ու գաղաններից, ոչ մի կենդանի շունչ չէր յայտնուում: Մարդկային ամենամօտ բնակարանն անգամ, հեռու էր վանքից և այնտեղ, կամ այնտեղից վանքը հասնելու համար, հարկաւոր էր հարիւր վերստ անցնել անապատի միջով:

Անապատն անցնել խիզախում էին միայն նրանք, որոնք անարգում էին կեանքը և հրաժարուելով նրանից, դիմում էին վանքը, որպէս դէպի գերեզման:

Այս հանգամանքներում պէտք է երևակայել, թէ որքան մեծ եղաւ վանականների զարմանքը, երբ մի գիշեր նրանց պարսպի դուռը ծեծում էր մի մարդ, որը, ինչպէս պարզուեց ցետոյ, հասարակ մեղապարտներից մէկն էր, որոնք այնքան սիրում են կեանքը: Այդ մարդը դեռ չաղօթած և վանահօր օրհնութիւնը չառած, գինի և ուտելիք պահանջեց: Վանահօր հարցին,—թէ նա ինչպէս քաղաքից յայտնուեց անապատում, նա որսորդական մի երկար պտտմութիւն արեց: Յայտնուեց, որ նա զնացած է եղել որսի և մի քիչ տւելի խմելով՝ մուրջուել էր:

Երբ նրան առաջարկեցին վանականութիւն ընդունել և այդպիսով ազատել իւր հոգին, նա ժպտալով պատասխանեց՝ «ես չեմ կարող ընկերակցել ձեզ»:

Վերջացնելով ուտելն ու խմելը, նա սկսեց աչքի անցնել իրան շրջապատող վանականներին, յետոյ յանդիմանօրէն գլուխը շարժելով ասաց.

— Դուք վանականներիդ ոչինչ չէք անում: Դուք միայն ուտել և խմել գիտէք: Միթէ արդպէս ես ազատում հոգիները: Հէնց այն ժամանակ, երբ դուք հանգիստ նստած, ուտելով և խմելով երանութեան մասին էք մտածում, քաղաքում ձեր մերձաւորները մեղքերի մէջ կորած, դժոխք են գնում: Մի տեսէք, թէ ինչեր են տեղի ունենում քաղաքում. ամառք մեռնում են քաղցից, իսկ ոմանք, չիմանալով ինչի գործադրել իրանց սուկիները, զեղխութեամբ ոչնչացնում են ինքնիրանց, ինչպէս մեղրի մէջ թաղուած ճանճեր: Մարդկանց մէջ ոչ ճշմարտութիւն է մնացել, ոչ հաւատ. ո՞վ պէտք է ազատէ նրանց, ո՞վ պէտք է քարոզէ նրանց. ինչպէս արբեցողները, թէ ձեզ պէս խոնարհ հոգի, սիրող սիրտ, և հաւատ ունեցողները: Ինչու համար է այդ բոլորը տուել ձեզ Աստուած. միթէ նրա համար, որ դուք այս չորս պատերի մէջ նստելով, ոչինչ չանէք:

Հարած քաղաքացու խօսքերը թէև անվայել և վիրաւորական էին, բայց զարմանալի կերպով ազդեցին վանահօր վերայ: Նա, սպրդնած դէմքով դարձաւ դէպի միաբանները և ասաց.

— Սղըայրներ, իրաւ որ այս մարդը ուղիղ է ասում: Իսկապէս որ խեղճ մարդիկը իրանց թուլութեամբ կորչում են մեղքերի և անհաւատութեան մէջ, իսկ մենք տեղներիցս ժած չենք գալիս. կարծես այդ բանը մեզ չի վերաբերում: Ինչո՞ւ համար ես չպէտք է գնամ և յիշեցնեմ Քրիստոսի մասին, որին իսպառ մոռացել են նրանք:

Քաղաքացու խօսքերը ոգևորեցին ծերունուն: Միւս օրն և եթ, վերցնելով իւր ցուպը, նա բաժանուեցաւ միաբաններից և ուղևորուեցաւ դէպի քաղաք:

Միաբանները մնացին առանց երաժշտութեան, առանց նրա քարոզների և երգերի:

Տիուր կերպով անցկացրին նրանք մի ամիս, երկու ամիս, բայց ծերունին չէր վերադառնում Վերջապէս երրորդ ամսից յետոյ, լուսեցաւ նրա ցուպի ծանօթ ձայնը: Միաբանները վրայ թափուեցին դիմաւորելու նրան ու ամեն կողմից հարցեր էին տալիս. բայց նա, փոխանակ ուրախացնելու՝ ոչ մի խօսք չասած, սկսեց դառը կերպով հեկեկալ, լաց լինել:

Միաբանները նկատեցին, որ նա այս երեք ամսուայ մէջ,

սաստիկ կերպով ծերացել էր. նրա երեսը յոգնած էր և խորին տխրութիւն էր արտայայտում. իսկ երբ սկսեց լալ, նա նմանում էր մի մարդու, որին կարծես վերաւորել էին: Այս տեսարանից զգացուած, միաբաններն ևս արտասուեցին ու կարեկցաբար սկսեցին հարցնել նրանից, թէ ինչու համար նա լաց եղաւ, ինչու համար է նրա դէմքը ախուր: Բայց նա, ոչ մի խօսք չասելով, փակուեց իւր խցում:

Սօթը օր նա այսպէս փակուած մնաց: ոչ ուտում էր, ոչ խմում, ու ոչ էլ նուազում երգեհոնի վերայ. այլ միայն լալիս էր: Նրբ բաղխում էին նրա խցի դուռը ու անշուշտ որ դուռս գայ և իրանց էլ մասնակից անէ իւր վշտին, նա պատասխանում էր միայն խորին լռութեամբ: Վերջապէս նա դուրս եկաւ. հաւաքելով իւր մօտ բոլոր միաբաններին, նա լացակուած երեսով—որի վերայ նշմարում էին տանջանքի և ատելութեան հետքեր—սկսեց պատմել այս երեք ամսուայ մէջ իւր գլխով անցածը: Նրա ձայնը հանդարտ էր և աչքերը ժպտում էին, երբ նկարագրում էր իւր ճանապարհորդութիւնը վանքից մինչև քաղաք: Նա պատմում էր, թէ ինչպէս ճանապարհին լսելով թռչունների երգերը, առուի խոխոջիւնը, երիտասարդական քաղցր յոյսերը յուզում էին նրա հոգին: Նա պատմում էր թէ գնալով երևակայում էր իրան իբրև մի զինուոր, որ պատերազմ գնալով հաւատացած է որ պիտի յաղթէ:

Նա խորհելով գնում էր և ճանապարհին երգեր և եղանակներ էր շարագրում և չէր էլ նկատել, թէ ինչպէս էր վերջացել այդ երկար ճանապարհը: Բայց այստեղ, երբ խօսքը եկաւ քաղաքի և մարդկանց մասին, նրա ձայնը դողդողաց, աչքերը փայլատակեցին և կարծես ամբողջովին լցուեցաւ բարկութեամբ:

Մտնելով քաղաք, նա մի այնպիսի տեսարանի էր հանդիպել, որ իւր ամբողջ կեանքում չէր տեսել ու չէր էլ կարող հրեակայել այդպիսի մի բան: Այդտեղ միայն, իւր ծեր հասակում, առաջին անգամ նա տեսել և հասկացել էր, թէ որքան հզօր է ստատման, որքան հրապուրիչ է շարը և որքան փոքրօրդի և ունայն են մարդիկ:

Նրա անբաղդութիւնից, առաջին մտած տունը անառականոց է եղել: Մօտ յիսուն հոգի հարուստ մարդկանցից, անհաշիւ կերպով ուտում և խմում են եղել: Հարբելով, նրանք խօսում էին այնպիսի սարսափելի և գարշելի խօսքեր, որ աստուածավախ մարդը երբէք թոյլ չի տայ իրան խօսելու կամ նրեակայելու:

Անսահման կերպով ազատ, զուարթ և երջանիկ զգալով իրանց, ոչ Աստուծուց էին վախենում, ոչ սատանայից և ոչ էլ մահից, այլ խօսում և անում էին այն, ինչ որ իրանք էին ցանկանում. կամ գնում էին այնտեղ, որտեղ մղում էր կիրքը: Իսկ ազնիւ գինին, որ փայլում էր սաթի նման, երևի շատ անուշ և հոտաւէտ էր, որովհետև ամեն մի խմող երջանիկ կերպով ժրպտալով, ցանկանում էր դարձեալ խմել: Կարծես գինին ևս հասկանում էր թէ ինչպիսի դիւական հրապոյր է թագնուած իւր քաղցրութեան մէջ, որովհետև ամեն մի խմող և ժպտացողին՝ նա ևս պատասխանում էր ուրախ փայլելով:

Այստեղ, ծերունին բարկութիւնից աւելի ևս արտասուելով, շարունակեց նկարագրել իւր տեսածները: Նա պատմեց թէ ինչպէս սեղանի վրայ, խմողներէ մէջ տեղը կանգնած էր մի կիսամերկ պոռնիկ: Դժուար թէ բնութեան մէջ գտնուէր, կամ մարդ կարողանար երևակայել մի աւելի գեղեցիկ և հրապուրիչ բան, քան այդ ընկած կինը: Նա մի թխահեր, սև սև աչքերով, երկար մազերով ու գիրուկ շրթունքներով գարշելի արարած էր: Նա անամօթ կերպով ժպտալով և ձիւնի նման սպիտակ ատամները կրճտացնելով, կարծես ասում լինէր. *«տեսէք, որքան ստոր և միևնոյն ժամանակ գեղեցիկ եմ ես»*: Մետաքսը և բեհեզը, գեղեցիկ ծալքերով ցած էին իջնում նրա ուսերից, բայց մարմնի գեղեցկութիւնը, կարծես չէր ուզում թագնուել նրանց յետևում. այլ ինչպէս գարնանային մատող կանաչ, դուրս էին ցցւում ծալքերի տակից: Այդ ընկած կինը խմում և երգում էր. միևնոյն ժամանակ յանձնւում էր ամեն մարդու, ով միայն ցանկանում էր: Յետոյ ծերունին բարկութեան ձեռները շարժելով, սկսեց նկարագրել ձիարշուները, ցուկերի կրկէսը, թատրոնները, նկարիչներէ արհեստանոցները, որտեղ նկարում և կաւից պատրաստում են մերկանդամ կանանց:

Նա խօսում էր ոգևորուած, գեղեցիկ և հնչուն. կարծես նուազում էր անտեսանելի լարերի վրայ: Իսկ միաբանները արձանացած, անյագ կերպով, յափշտակուած լսում էին նրա պատմածները:

Նկարագրելով սատանայի գեղեցկութիւնները, չարութեան հրաշալիքները և իգական սեռի գրաւչութիւնը, նա նզովեց սատանային, և յետ դառնալով փակուեց իւր խցում:

Հետևեալ օրը, երբ նա դուրս եկաւ իւր խցից, վանքում ոչ ոք չէր մնացել. բոլորը փախել էին քաղաք:

Բարգմ. Ս. Համայրատեան